2001 թ. նմուշի 50 000 դրամ անվանական արժեքով թղթադրամ

Դիմերես

Դարձերես

Դիմերես

Դարձերես

2001 թ. նմուշի 50 000 դրամ անվանական արժեքով թղթադրամ

Դիմերես

Դարձերես

Դիմերես

Դարձերես

Հումք
Բարձրորակ 100% բամբակե թուղթ:

1. Ջրանիշ
Բազմերանգ ջրանիշ, որը պարունակում է թղթադրամի վրա ներկայացված անձի դիմանկարը և անվանական արժեքը (բացառությամբ 50000 դրամ թղթադրամի, որտեղ պատկերված են խաչեր):

2. Թափանցիկ պատկեր
Թղթադրամի դիմերեսին և դարձերեսին տպագրված տարրեր, որոնք, թղթադրամը լուսընդդեմ դիտելիս, լրացնում են միմյանց՝ կազմելով ամբողջական պատկեր:

3. Պաշտպանական ներգիծ
Թղթադրամը պարունակում է երկու պաշտպանական ներգիծ.
1) ներգիծ, որն ամբողջությամբ ներդրված է թղթի մեջ և երևում է միայն թղթադրամը լուսընդդեմ դիտելիս (բացառությամբ 50000 դրամ թղթադրամի),
2) պատուհանաձև ներգիծ, որը թղթադրամի դարձերեսին երևում է կանոնավոր հատվածների, իսկ լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մեջ կարդացվում է «AMD» և թղթադրամի անվանական արժեքը արտահայտող թիվը (բացառությամբ 500 դրամ թղթադրամի):

4. Թաքնված պատկեր
Թղթադրամի դիմերեսի վրա տեղակայված օվալաձև զարդանախշ, որի մեջ թղթադրամն աչքի բարձրության մակարդակի վրա դիտելիս և դիտման անկյունը փոխելիս հայտնվում է թղթադրամի անվանական արժեքն արտահայտող թիվը (բացառությամբ 50000 դրամ թղթադրամի, որտեղ հայտնվում են «301» և «2001» թվերը):

5.1. Հոլոգրաֆիկ պատկեր
Թղթադրամի դիմերեսին փակցված հոլոգրաֆիկ պատկեր, որի դիտման անկյան փոփոխության դեպքում կարդացվում են թղթադրամի անվանական արժեքն ու «AMD» գրառումը (1999 թ. թողարկման 20000 դրամ թղթադրամ, 2003 թ. և 2009 թ. թողարկման 5000 դրամ թղթադրամ):
50000 դրամ թղթադրամն ունի հոլոգրաֆիկ ժապավեն ապամետաղականացված եզրերով:

5.2. Կինեգրամ
Մետաղականացված ժապավեն ապամետաղականացված եզրերով և կրկնվող «AMD» գրառումով: Պարունակում է թղթադրամի վրա ներկայացված անձի դիմանկարն ու դրամի գրաֆիկական նշանը՝ «֏», կամ զարդանախշ ու թղթադրամի անվանական արժեքը, որոնք թղթադրամի դիտման անկյան փոփոխման ընթացքում փոխարինում են միմյանց:

6. Խոր տպագրություն
Խոր տպագրության եղանակով տպագրված են թղթադրամի դիմերեսի որոշ մասեր, մասնավորապես՝ անվանական արժեքն արտահայտող թվանշաններն ու բառերը, դիմանկարը, տկարատեսների համար նախատեսված հատկանիշը: Տպագրությունն ունի բարձր մակերես և զգացվում է շոշափելիս:

7. Անհատական համարանիշ
Թղթադրամի դիմերեսին առկա է 2 անհատական համարանիշ՝ բաղկացած 2 տառերից և 8 թվերից: Համարանիշերից մեկը տպագրված է սև գույնով և ունի հորիզոնական դիրք, իսկ մյուսը տպագրված է կարմիր գույնով և ունի ուղղահայաց դիրք: Ուղղահայաց կարմիր գույնի համարանիշը ուլտրամանուշակագույն լույսի ներքո լուսաածորում է դեղին գույնով: Բացառություն է կազմում 50000 դրամ թղթադրամը, որի երկու համարանիշերն էլ սև են, բաղկացած են 2 տառերից ու 7 թվերից, և լուսաածորում է հորիզոնական համարանիշը:

8. Մանրատառաշար
Մանրատառաշարով կատարված գրառումներ, որոնք կարող են կարդացվել խոշորացույցի միջոցով: Կեղծ թղթադրամների վրա մանրատառաշարը սովորաբար անընթեռնելի է:

9. Ուլտրամանուշակագույն հատկանիշ
Թղթադրամի դիմերեսին առկա են լուսածորող ներկով տպագրված հատվածներ, որոնք բացահայտվում (լուսածորում) են միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո: Ուլտրամանուշակագույն լույսի ներքո լուսածորում են նաև անտեսանելի մանրաթելերը և ուղղահայաց համարանիշը:
Բացառություն է կազմում 50000 դրամ թղթադրամը, որտեղ լուսածորում է հորիզոնական համարանիշը:

10. Օպտիկապես փոփոխական ներկ
Թղթադրամի դարձերեսին անվանական արժեքն արտահայտող թվի ներքևի մասը թղթադրամի դիտման անկյան փոփոխության դեպքում փոխում է գույնը (STEP®):
1999 թ., 2003 թ., 2009 թ. թողարկման 5000 դրամ թղթադրամների դեպքում դիմերեսին անվանական արժեքն արտահայտող թվերի և բառերի մի մասը թղթադրամների դիտման անկյան փոփոխության դեպքում փոխում է գույնը (OVI):
50000 դրամ թղթադրամի դեպքում օպտիկապես փոփոխական ներկով (STEP®) տպագրված է դարձերեսին պատկերված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի խորհրդանիշը:

11. Մարգարտափայլ ներկ (Colorcrypt®)
Մարգարտափայլ ներկով թղթադրամի դիմերեսին տպագրված հորիզոնական գծեր կամ դարձերեսին տպագրված լայն ուղղահայաց ժապավեն, որոնք լույսի անկման փոփոխության դեպքում ստանում են մարգարտափայլ երանգներ:

12. Ոսկեգույն փայլաթիթեղ
1999 թ. թողարկման 5000 դրամ թղթադրամի դիմերեսին փակցված է ոսկեգույն փայլաթիթեղ, որի վրա մասամբ տպագրված է անվանական արժեքը: